

Հոռոմում լոյս տեսած Eurasian studies գիտական հանդէսի 2006 թ. 1-2 միացեալ համարը՝ Etudes sur l'Iran Medieval et moderne վերտառութեամբ, ամփոփում է միջնադարեան եւ ժամանակակից Իրանի պատմա-շակութային եւ լեզուաբանական խնդիրներին վերաբերող յօդուածներ՝ գրուած եւրասիական մի շարք երկրների իրանագէտների կողմից:

Հատորը նուիրուած է Ֆրանսիացի մեծանուն իրանագէտ Ժան Կալմարի 75-ամեակին, որն այս ծրագրի հիմնադիր-հեղինակներից մէկն է: Այս շարունակական հրատարակութիւնը յաւակնում է արեւելագիտական ուսումնասիրութիւնների բնագաւառում հետաքրքիր գիտարկումների եւ բանավէճերի, բազմակողմանի հետազոտութիւնների եւ ինչ-որ տեղ դրանց պարբերականացման մի յուշարձան դառնալ: Այն նախաձեռնել եւ հրատարակութեան են պատրաստել Ժան Կալմարի աշխատակիցներն ու տարբեր տարիների աշակերտները, նրա դպրոցի հետեւորդները: Հատորը հրատարակուել է Տոկիոյի համալսարանին կից Արեւելքի մշակոյթի ինստիտուտի եւ Mondes Iranien et Indien հետազոտութիւնների միացեալ կենտրոնի աշխատասիրութեամբ: Յօդուածների հաւաքման եւ խմբագրման աշխատանքներն իրականացրել են Միշել Բեռնարդինին (էքս ան Պրովանսի համալսարան, Ֆրանսիա), Մասաչի Հանեդան (Տոկիոյի համալսարան, Ճապոնիա) եւ Մարիա Ջուպպէն (CNRS, Փարիզ): Հրատարակութիւնն իրականա-

ցուել է Հոռոմում՝ Կառլո Ալֆոնսո Նալլինոյի անուան Արեւելագիտութեան ինստիտուտի եւ Քեմբրիջի Նիւնհեմ քոլեջի Օսմանագիտական ուսումնասիրութիւնների Skilliter կենտրոնի ջանքերով:

Լինելով Սեֆեան եւ Ղաջարական Իրանի պատմագրութեան մասնագէտ եւ պատմաբան՝ Ժան Կալմարը, որը Եւրոպայի եւ Արեւելքի միջեւ յարաբերութիւնների մեծ փորձագէտ է, զբաղուել է իմամիզմի հարցերով եւ յատկապէս՝ «ժողովրդական» շիւիզմի, բանահիւսութեան, պատմավիպագրական գրականութեան ուսումնասիրութեամբ: 1989 թ. Փարիզում կազմակերպելով Սեֆեան Իրանին նուիրուած առաջին միջազգային կլոր սեղանը եւ հրատարակելով նրա նիւթերը՝ Ժան Կալմարը, փաստօրէն սկիզբ դրեց մի աւանդոյթի, որն իրականանում է 4-5 տարին մէկ անգամ եւ արդէն իսկ ընդգրկում է երկու անգամ աւելի մասնակիցներ, քան իր մեկնարկի ժամանակ:

Ձեռնարկը հրատարակել է նաեւ մեծ իրանագէտի՝ 1971-2004 թթ. գրած 250-ից աւելի աշխատանքների մատենագրութիւնը (էջ XI-XVI):

Գիտական հանդէսը բացւում է Իրազ Աֆշարի (Թեհրանի համալս.) Փաստաթուղթ՝ Չիմաստանում իրանական օպիումի առեւտրի մասին յօդուածով: 1859 թ. յիշեալ առեւտուրն իրականացւում էր Պարսից Մոցի ճանապարհով ոմն Մուհամմեդ Իսմայիլի կողմից: Նրան Չիմաստանում սպասում էր իր որդին՝ Մուհամմեդ Սադե-

կը, այն իրացնելու համար: Փաստաթղթից երեւում է, որ Պարսից Մոցում այդ ժամանակաշրջանում ներկայ անգլիական առեւտրական ընկերութիւնները ամէն կերպ խոչընդոտում էին օպիումի տեղափոխումը դէպի Չիմաստան: Հրատարակուող փաստաթուղթը կրում է 1874-1875 թուագրումը:

Փարիզի «Բարձր ուսումնասիրութիւնների պրակտիկ դպրոցի» գիտաշխատող Դընիզ Էգլը հանդէս է եկել Ղազան խանի սիրիական արշաւանքների իսլամական լեգիտիմութիւնը յօդուածով, ուր հետաքրքիր անդրադարձ է կատարում XIII դ. կէսերի գէոպոլիտիկ իրավիճակի, Իլխանների, Իրանի մոնղոլների, մամլուկների եւ Եգիպտոսի միջեւ եղած յարաբերութիւններին՝ դրանք գիտելով պատմական կոնտեքստի մէջ, վերլուծելով ժամանակի փաստաթղթերն ու դրանց տրանսմիսիան (Ղազան խանի Դամասկոսի բնակչութեանն ազատ կեանքի 1300 թ. յուշուարի 2-ի Օմմեյյադների մզկիթում տուած ֆիրմանը եւ նրա կողմից 1301 թ. սուլթան ալ-Մալիք ալ-Նասր Մուհամմեդին գրած նամակը եւ այլն):

Յօդուածում հեղինակն անդրադառնում է նաեւ Ղազան խանի՝ մամլուկների կողոպուտի եւ կաշառակերութեան ուժեղացման դէմ պայքարը որպէս ջիհադ յայտարարելու մասին ֆիրմանին: Նա դատապարտում է կրօնական տարբերութիւնների հիման վրայ մամլուկների իրականացրած նենգութիւնները, քանի որ ինչպէս հեղինակն է բացատրում, Ղազան խանի բանակում ծառայում էին ինչպէս քրիստոնեայ հայեր եւ վրացիներ, այնպէս էլ հրէաներ, եւ իր ռազմական արշաւներում յաճախ նրան ուղեկցում էր նաեւ Կիլիկիայի Հեթում Բ արքան իր զօրազնդով: Ֆիրմանի տեքստն աւարտւում է՝ Ղազան խանին ներկայացնելով որպէս Բիլադ ալ Շամի՝ իր նոր հպատակների պաշտպան, որի համար էլ

Իլխանի զինուորները պատժի էին ենթակայ աշխարհիկ բնակչութեանը նեղութիւն պատճառելու համար:

Յօդուածում խօսուած է մամլուկեան ուժեղացման դէմ ջիհադի եւ ալ-մալիք ալ-նասր Մուհամմեդին հնազանդեցնելու գործընթացի հանգամանքների մասին (Կահիրէի մոնղոլական դեսպանութիւնը, խաղաղութեան առաջարկը, թուղթ-նամակների հետապնդած հիմնական նպատակը): Հեղինակը հանգամանօրէն անդրադառնում է Ղազան խանի նամակի երկու տարբերակներին:

Յօդուածին կից հրատարակուած են նաեւ այն աղբիւրների ցանկը, որտեղ արտացոլուած են Ղազան խանի aman-ը եւ ալ-մալիք ալ-նասր Մուհամմեդին գրուած նամակը:

Ժան-Լուի Բրաքէ-Գրամոնի (Փարիզ, CNRS) Երեւակայական պրոգրեսի սահմանը յօդուածը սեֆեան եւ օսմանեան մի քանի տեքստերի օրինակներով բացատրուող իրական փաստի ոչ ռացիոնալ, ֆանտաստիկ զարգացումների մասին է: Յօդուածը մաս է կազմում Փարիզի CNRS-ի եւ Ստամբուլի Անատոլեան ուսումնասիրութիւնների Ֆրանսիական ինստիտուտի «Պատմութիւն եւ օսմանեան պատմութեանը յարակից գիտութիւններ» ծրագրի աշխատանքների շրջանակին: Յօդուածն անդրադառնում է զանազան տեքստերի (այդ թւում նաեւ՝ բնագրով), որտեղ ակնյայտ են սիւժէների դեմոնական եւ անիրական նկարագրութիւններ. Արիստոտելն ու դեմոնները (Շահ Իսմայիլի քրոնիկներից՝ 1512 թ.), Երեւակայական աշխարհի անորիցնակ աշխարհագրութեան մասին (Հանդ Ամիր, XVI դ.), Ֆանտաստիկ գազանաց շարքից՝ «Կասպից ծովի փղի ականջներով կոկորդիլոսի» նկարագրութիւնը Էւրիպ Չելեբիի ճանապարհորդութիւնից, ինչպէս նաեւ Սէյիդի Ալի Ռէիսի Երկրների հայտնի օսմանեան մի անաբազիս Հնդկաստանի

եւ Կենտրոնական Ասիայի վրայով աշխատութեան մէջ եղած համանման նկարագրութիւնները բնագրերը: Նոյն էլիւրա Չելեբիի աշխատութեան մէջ մատնանշուած է նաեւ «կանանց երկիրը»:

Նէպոլի համալսարանից Միշել Բերնարդինիի Թեմոտիդեանի վաթսուհի մասին յօդուածում հեղինակը քննարկում է վաթսու տերմինի գործածութեան պայմանները: Նա համոզուած է, որ Թեմոտի շրջանի հեղինակների համար այս տերմինը ունի ծննդավայրի կամ այն վայրի իմաստը, որ իրենք ժառանգել են իրենց նախնիներից: Թեմոտը ինքը չէր կարող օգտագործել այն, քանի որ Šamī-ում այն չկայ, այն շրջանառութեան մէջ է դրուել նրա յաջորդների կողմից: Այլ կերպ ասած՝ դա պրոպագանդայի մի ձեւ էր այն ժամանակ, երբ Թեմոտի կայսրութիւնն այլեւս թուլացած էր, եւ նրա լեգիտիմութիւնը պահպանելու համար գործիքներ էին անհրաժեշտ: Կարելի էր նաեւ մտորել այն մասին, որ Հաթեֆին աւանդական գրականութեան շարունակողը հանդիսանալով, աշխատում էր իսլամական եւ պարսից աւանդոյթը ներդնել մոնղոլական աշխարհի նորացման հիմքում: Մա իդէոլոգիական մի ծրագիր էր, որը սկսուած էր Իլխանների իսլամացումով եւ մեծ դեր էր յատկացնում պարսիկ «վէլիքներին»: Վաթսու լինելով արաբական տերմին՝ XV դ. իրանական կոնտեքստում, ի տարբերութիւն ընդունուած այլ տերմինների (mihan, han o man, ulus, yurt), օգտագործուեց «մասնաւորեցուած» ձեւով, արտայայտեց սեփական տիրոջինների նկատմամբ յարաբերութիւնների նոր կոնցեպտ եւ հայրենի երկրի մասին այլ մտածողութիւն ստեղծեց:

Փիթեր Շելկովսկու (Նիւ Եօրք) Յուսէյնիէ եւ իմամբարայ. ամանութիւն յօդուածում խօսուած է պաշտամունքային վայրերի մասին, որոնք գտնուած էին մզկիթների հարեւանութեամբ՝ վրանների տակ: Յօ-

դուածին կցուած են բաւականաչափ սխեմաներ ու ժամանակակից ֆոտոներ:

Իսկ Թեհրանի համալսարանի մասնագէտ Էհզան Էշրաքին անդրադարձել է Սեֆեան իշխանութեան Ղազուինի արքունիքի շրջակայքին, որը գովերգուած է Աբդիբէգ Նաւիդիի բանաստեղծութիւններում: Յօդուածը ուղեկցուած է հետաքրքրական նկարներով եւ սխեմաներով:

Ստրասբուրգի Մարկ Բլոշ համալսարանից Յուսէյին Էսմայիլիին հետաքրքրել է Թեհրանում XIX դ. երկրորդ կէսին իրականացուող թաղիէ թատերախաղի բեմական դեկորացիաների առկայութեան հարցն ու նրանց իմաստային արտայայտութիւնը: Իսկ Փարիզի արեւելեան լեզուների եւ քաղաքակրթութիւնների ինստիտուտից Մարինա Գայեարն անդրադարձել է պարսկական արձակ վէպի մէջ կերպարի էությունային:

Վիլլեմ Յլորի (Բեթեզգա, Հնդկաստան) յօդուածի նիւթը հնդկական տեքստիլի ներմուծումն է Սեֆեան Իրան. թէ ինչպիսին է եղել դրա պահանջարկը, ինչ որակի արտադրանք է ներկրուել, որ տեսականին որ երկրամասից եւ ինչ ճանապարհներով: Միայն 1621 թ. Հնդկաստանի տարբեր նաւահանգիստներից տեքստիլով բեռնուած 52 նաւեր են դուրս եկել, որոնք 1622-ին արձանագրուել են Հորմուզի ծոցում: Դրանք բեռնուած են եղել ինչպէս մետաքսեայ, այնպէս էլ բամբակեայ գործուածքներով: Հեղինակը յօդուածին կցել է հետաքրքրական ստատիստիկ տախտակներ Սինդիից, Փենջաբից, Հիւսիսային եւ հարաւային Հնդկաստանից, Բենգալիայից եւ այլ երկրամասերից Բենդեր-աբաս բերուող ապրանքի, նրա արժէքի, եկամտի, հարկերի մասին: Խօսուած է նաեւ Պարսկաստանում հնդկական տեքստիլի նմանակման մասին: Բաւական ծաւալուն յօդուածը պատմական եւ տնտեսագիտական ստուար նիւթ է պարունակում, քանի

որ օգտագործուած է թէ՛ պատմագիտական հարուստ գրականութիւն եւ թէ՛ զանազան արխիւային նիւթեր, այդ թւում նաեւ՝ Անգլիական եւ Հոլանդական Արեւելահնդկական ընկերութիւնների նիւթերը:

Մասաչի Հանեդայի (Տոկիոյի համալս.) յօդուածը վերնագրուած է Արեւելահնդկական ընկերութիւններն ու Բենդեր-աբասի թարգմանիչները: Հեղինակն, ըստ արժանոյն գնահատելով այն կարեւոր դերը, որ կատարում էին միջնորդ-թարգմանիչները եւրոպական պետութիւնների առեւտրական ներկայացուցիչների եւ տեղի առեւտրական ընկերութիւնների միջեւ, այն համեմատում է նաեւ նոյն եւրոպացիների՝ Նազասակի նաւահանգստում աշխատող թարգմանիչների հետ: Օգտագործելով ծաւալուն գրականութիւն, ինչպէս նաեւ Անգլիական եւ Հոլանդական Արեւելահնդկական Կոմպանիաների արխիւային նիւթը (պիտոսանքով նշելով, որ նման արխիւներ չեն պահպանուել Պարսկաստանում, քանի որ երկկողմանի ուսումնասիրութիւնը շատ աւելի արժանահաւատ կը լինէր)՝ հեղինակը յանգում է այն եզրակացութեան, որ թարգմանչի կարգավիճակը տարբեր հասարակութիւններում տարբեր ձեւով է կարեւորուել:

Նազասակի նաւահանգստում Հոլանդական Արեւելահնդկական ընկերութեան հետ աշխատող թարգմանիչները եղել են պետական կամ լոկալ կառավարիչների կողմից նշանակուած ծառայողներ, որոնց միջոցով իշխանութիւնները վերահսկել են օտարագրիների ամէն մի գործողութիւն: Թարգմանչի պաշտօնը եղել է ժառանգական, եւ մի քանի ընտանիքներ են ունեցել այդ գործունէութեամբ զբաղուելու իրաւունք, որոնք էլ պարբերաբար զեկուցել են սեօգունին իրենց եւ օտարագրիների միջեւ գործունէութեան մասին: Իսկ Բենդեր-աբասում, ուր թարգմանչի գործունէութեամբ, ըստ հեղինակի, հիմնականում

զբաղուած էին տեղի հայ վաճառականները, այս պաշտօնը ամենեւին չէր վերահսկուած իշխանութիւնների կողմից. թարգմանիչները կարող էին աշխատել ինչպէս նրանց, այնպէս էլ եւրոպական կոմպանիաների համար, աւելին՝ կարող էին նաեւ անձնական առեւտրական շահ հետապնդել: Պարսկահայ թարգմանիչները յաճախ միջնորդի, դիւանագէտի, նոյնիսկ ինչ-որ տեղ քաղաքական գործչի դեր են կատարել: Այս առիթով պրոֆ. Հանեդան մանրամասն վերլուծութեան է ենթարկում XVIII դ. 20-ական թթ. Հորմուզի գործը, ուր եւրոպացիների, աֆղանների ու պարսիկների միջեւ տարիներ տեւած լուրջ բանակցութիւններում թարգմանիչների դերը վերջինը չի եղել:

Ռուզի Մեթիլի (Դելաւերի համալս., ԱՄՆ). Քաղցր հիւրընկալութիւն Ծաֆի համար. Անգլիական եւ Հոլանդական արեւելահնդկական ընկերութիւնները Ծաֆ Սուլթան Յուսէյինի պարսկական արքունիքում (1694-1722 թթ.) յօդուածն անդրադառնում է Շահի այցելութեանը Անգլիական-արեւելահնդկական ընկերութեանը հիւրընկալուելու դիպուածին՝ հանգամանօրէն նկարագրելով այն՝ ըստ տարբեր արխիւային եւ պատմագրական նիւթի: Հեղինակը քննարկում է նաեւ Պարսկական արքունիքի վերաբերմունքը ինչպէս միւս արեւելահնդկական ընկերութիւններին, այնպէս էլ ուսական դիպլոմատիկ կորպուսին:

Շառլ Մելուիլի (Բեմբրիջի համալս.) Իրն Յուզամի «Հաւարան-Ասմէն» եւ Ֆիրդուսու «Շահ-Ասմէն» յօդուածում հեղինակը գրականագիտական եւ բանահիւսական համեմատական վերլուծութեամբ յանգում է այն եզրակացութեան, որ առաջինը, լինելով բաւական հետաքրքիր աշխատութիւն, XV դ. էպիկական ժանրի դարգացման օրինակ է՝ յետթեմուրեան շրջանի ժողովրդական հոգեւոր բնոյթի ստեղծագործութեան օրինակ, որը հետագայում բազմիցս ար-

տագրուել է եւ ծաղկուել շքեղ մանրանկարներով:

Իրինա Նաչկեբեիայի (Թբիլիսիի արեւելագիտութեան ինստ.) Գեներալ Գարդամը եւ Արա Պարսկաստանի միսիայի անդամները՝ ըստ Հնդկաստանի արշաւախմբի տուեալներին (կոնտէքստի) յօդուածում հեղինակը նշում է, որ XIX դ. սկզբում Պարսկաստանի քաղաքական իրադրութիւնը անկայուն էր, եւ Յաթալի շահը չէր վերահսկում այն: Անգլիական եւ ռուսական ազենտների մեծ ցանց էր աշխատում երկրում: Հասկանալով իր ռազմական թուլութիւնը՝ շահը փորձում էր խաղալ այս երկու ուժերի մէջ: Վիճակից փորձում էր օգտուել Յրանսիան: Ինչպէս երեւում է գեներալ Գարդանի տեղեկատուութիւնից, Նապոլէոնը բաւական անտեղեկ էր ռեզիտների գէոպոլիտիկ վիճակին: Շահը, օժանդակելով Ֆրանսիական բանակին դէպի Հնդկաստան իրենց արշաւի գործում, փորձում էր Նապոլէոնի միջոցով Ռուսաստանի հետ իր խնդիրներին որոշ լուծում տալ: Հեղինակի դիտարկմամբ, Նապոլէոնի արեւելեան քաղաքականութեան հետեւանքով նրա բարձրաստիճան զինուորականներն առաջինը հանգամանօրէն ուսումնասիրեցին Քաջարների պետութիւնը՝ տալով նրա հասարակական-քաղաքական եւ տնտեսական համայնապատկերը: Յրանսիական էմիսարների տեղեկութիւններն ուսումնասիրելով՝ հասկանալի է դառնում, որ Պարսկաստանը չէր կարող դառնալ հնդկական արշաւանքի համար ռազմական բազայ եւ ոչ էլ քաղաքական եւ ռազմական դաշնակից: Դժուար կը լինէր եւրոպական բանակներին կոորդինացնել իրենց գործողութիւնները կարգապահութեամբ չփայլող քաջարական զօրքերի հետ, որոնք համարում էին տարբեր եւ յաճախ իրար ընդդէմ դիմադիր այլալեզու եւ տարբեր մշակոյթներ կրող ազգութիւններով: Այս մասին հանգամանօրէն անդրադառնում է Գարդանն իր աշխատութեան մէջ, որի միսիան

բաղկացած էր լաւագոյն երիտասարդ կադրերից: Նրանցից շատերը նախկինում հասել էին փայլուն յաջողութիւնների իրենց երկրի դիւանագիտական, ռազմական, քաղաքական եւ գիտական ոլորտներում: Չնայած Յրանսիայի կայսեր յաւակնոտ պլանը մնաց չիրագործուած, բարձրաստիճան զինուորականների գործունէութիւնը մեծ նշանակութիւն ունեցաւ մի երկրի համար, որն այդ ժամանակ ներգրաւուած էր Ռուսաստանի դէմ պայքարում: Հեղինակը կարեւորում է Պարսկաստանի եւ նրա շրջակայ ռեզիտների մասին Նապոլէոնի զինուորական եւ աշխարհիկ մասնագէտների 1805-1807 թթ. հաւաքած նիւթը, որի նկատմամբ հետաքրքրութիւնը չի նուազել նոյնիսկ մեր օրերում:

Էնդրիւ Զ. Նիւմանի (Էդինբուրգի համալս.) յօդուածը վերնագրուած է Վէզիր եւ մոլլայ. Սեֆեան ու շրջանի բանավէճ ուրբաթօրեայ աղօթքի մասին: Ուրբաթօրեայ աղօթքի մասին բանավէճերը քաղաքական բարձրաշխարհիկ շրջանների եւ հոգեւոր էլիտայի միջեւ գալիս էին դեռեւս հին շրջանից եւ շարունակուում էին մինչեւ XVII դ.: Հեղինակը կոնկրետ օրինակների վրայ անդրադառնում է այս վիճաբանութեան մէջ դատարանների որդեգրած դիրքին («Այնի»), որոնք պէտք է լուծէին հակամարտութիւնը, որն այդպէս էլ շարունակեց գոյատեւել եւ նոյնիսկ ինչ-որ շրջանում պարտադիր բնոյթ կրեց պարսիկ միջնադարեան իրականութեան մէջ: Նշենք, որ հեղինակը մէկ անգամ չէ, որ անդրադարձել է Իրանի հոգեւոր-կղերական հարցերին եւ ունի բազմաթիւ յօդուածներ եւ հրատարակումներ այս թեմայով:

Անջելո Միչել Պիեմոնտեզի (Հոռմի La Sapienza համալս.) Եանիկուլի տօնակատարութիւնները եւ Հոռմ գաղթած սեֆեան դիւանագէտները յօդուածը՝ Հոռմի մի քանի արխիւների եւ գրադարանների նիւթերի հի-

ման վրայ անդրադառնում է XVII դ. պարսից շահի կողմից Հոռմի Պապի մօտ ուղարկուած երեք դեսպանութիւններին, որոնց անդամներից մի քանիսը կաթոլիկութիւն են ընդունել: Դեսպանութիւնները, որոնք ուղեկցուում էին եւրոպացի դիւանագէտների կողմից, հետապնդում էին հակաթուրքական կողմից իր կազմաւորման խնդիրը եւ մեծ շուքով էին ընդունում Պապի կողմից: Պապը ինքն է ներկայ գտնուել դեսպանութիւնների այն պարսիկ անդամների մկրտութեան արարողութեանը, որոնք որոշել են կրօնափոխ լինել: Աւելին՝ կաթոլիկացած պարսիկները որպէս թարգման են ծառայել Վատիկանում պարսկական այլ դեսպանութիւնների հետ հանդիպման ընթացքում: Յօդուածն անդրադառնում է երկու հայ գործիչների, որոնցից առաջինը՝ հալեպահայ Թումաշան Աւետիքը (Նէոֆիտների քուլեջի սան), Վատիկանի գրադարանին է նուիրել 1312 թուագիր Մատթէոսի Աւետարանը, որը պարսկական կողմից ամենահնագոյն արտայայտիչներից մէկն է համարուում: Խօսուում է նաեւ Խոջայ Սաֆար Ազարիայի մասին, որին Պօղոս Ե պապը ազնուականական տիտղոս է շնորհել:

Նոր Սորբոն (Փարիզ) համալսարանի պրոֆեսոր Եան Ռիչարը անդրադարձել է 1921 թ. Իրանի յեղաշրջմանը վերաբերող անտիպ մի փաստաթղթի՝ էլէն Հոփընոյի օրագրին: Ինչպէս նշում է հեղինակը, յիշեալ յեղաշրջմանը յաջորդող կէսդարեայ գրաքննութիւնն ու հարկադրական լուծութիւնը պատմաբաններին ստիպում են Իրանի պատմութեան այս շրջանի մասին ուսումնասիրութիւններում դիմել առաւելապէս օտար աղբիւրներին: Այդպիսին է Իրանում Յրանսիայի գործերի հաւատարմատար Հանրի Հոփընոյի կնոջ՝ էլէնի (նա 24 տարեկան էր, երբ ամուսնուն Պարսկաստանի դեսպանութիւնում նշանակեցին Բրազիլիայում ծառայութիւնն աւարտելուց յետոյ) յուզիչ ու հետաքրքրական օ-

րագիրը՝ մանաւանդ կապուած յիշեալ ժամանակաշրջանի դէպքերի հետ: Նշենք նաեւ, որ այս կնոջ գրչի տակից են դուրս եկել նաեւ վաւերագրական ժանրի այլ աշխատանքներ եւս, ինչպէս նաեւ զանազան ճանապարհորդական նօթեր՝ կապուած իր ամուսնուն՝ ժամանակի փայլուն դիւանագէտներից մէկի նշանակումների հետ: Բացի այդ, էլէնը բարեկամական հետաքրքիր կապեր է ունեցել Պիկասոյի, Փ. Կոկտոյի, Ա. Լեժէի եւ ժամանակի այլ յայտնի մտաւորականների հետ: Յատկանշական են նրա հանդիպումները պարսկական բարձրաստիճան ազնուականութեան հետ, ինչպէս նաեւ 1921 թ. պետական յեղաշրջման մանրամասն նկարագրութիւնը:

SIE-ի դերի վերաիմաստաւորումը Սեֆեան Իրանի վաղ շրջանում. երկու հարց վերտառութեամբ Հոռմի La Sapienza համալսարանի գիտաշխատող Բիանկամարիա Սկարչիա Ամորետտին մէկ անգամ եւս համոզում է, որ Սեֆեան Իրանում չի իզմը եւ սիւննիզմը միշտ էլ եղել են իշխանութիւնն իրագործելու երկու ձեւեր: Ամորետտին օգտագործել է հարուստ պարսկական եւ եւրոպական գրականութիւն, այդ թւում նաեւ՝ էնդրիւ Զ. Նիւմանի հրատարակումները:

Թեհրանի համալսարանի պրոֆեսոր Մանսուր Սեֆաթգոյը հանդէս է եկել Պարսկական պատմական գրութիւնները վերջին Սեֆեանների օրօք. անկման շրջանի պատմագիրներ յօդուածով, ուր անդրադարձել է պալատական հեղինակների կողմից գրուած մի շարք քիչ ուսումնասիրուած եւ անտիպ ձեռագրերի եւ, համեմատական վերլուծութեան ենթարկելով դրանք, եզրակացրել, որ լինելով իրադարձութիւնների կենտրոնում եւ ունենալով ոսկեդարեան պատմագրութեան աւանդույթը՝ նրանք գուցէ եւ ոչ պրոֆեսիոնալ ձեւով, բայց վերարտադրում էին իրենց տեսածն ու ապրածը: Իսկ նրանցից ոմանք

նոյնիսկ դարձան Ղաջարների հարստութեան պատմագրութեան հիմքը: Յօդուածը պարունակում է հարուստ ձեռագրական նիւթ:

Մարիա Զուպպէի (CNRS, Փարիզ) յօդուածը՝ Նօթեր պարսկա-հնդկական պատմագրութեան վերաբերեալ. Արդուլլահ Քարուլիի քրոնոգրամմաներից մի «Ժամանակագրութիւն, վերաբերում է մինչ այժմ անյայտ հեղինակի պատմական գրութեան բացարձակապէս գործնական մի դրսեւորման, որը տարբեր է իշխանական պատմագրութեան ձեւաոճից: Այն պատմութիւնը ներկայացնում է քրոնոգրամմաների ձեւով: Կողմնակիական եւ տեքստաբանական տեսակէտից ուսումնասիրուող ձեռագրերը հետաքրքրական են նախ որպէս պարսկա-հնդկական աւանդութի արտայայտութիւն պատմագրութեան եւ արտագրութեան ասպարէզում, ինչպէս նաեւ պարսկա-հնդկական եւ Կենտրոնական Ասիայի մշակութային շփումների եւ փոխյարաբերութիւնների տեսակէտից: Առաւելապէս ոչ էլիտար, համեմատաբար պարզունակ ստեղծագործութիւնները յիշեալ գէոպոլիտիկ շրջանում տարածում էին մեծ մասամբ ճամփորդների, վաճառականների, հոգեւորականների, ի վերջոյ՝ նմանատիպ լեզուամշակութային ժառանգութեան կրողների միջոցով Սինդից մինչեւ Բուխարա:

Պորտուգալիայի Կաթոլիկ համալսարանից Լուի Ֆրիլպ Ֆ. Ռ. Թոմազի Խոջայ Փիր Քուլի եւ Արա Պարսկաստանի մասին Աօթերը յօդուածը, հիմնուելով պորտուգալական արխիւային նիւթի, ինչպէս նաեւ Գ. Գիւլբենկեան Ֆոնդի մշակութային կենտրոնի հրատարակութիւնների վրայ, վեր է հանել XVI դ. կէսերին Գոայում հաստատուած պարսիկ (°) վաճառականի գործունէութիւնը, որը, վայելելով տեղի պորտուգալացի կառավարիչների վստահութիւնը, նրանց կողմից զանազան դիւանագիտա-

կան բանակցութիւնների մէջ է մտել հնդկական վերնախաւի հետ, այդ երկրում պորտուգալական գերիշխանութիւնը հաստատելու եւ ընդլայնելու համար: Վաճառականը փոքր դեր էր ունեցել զանազան դեսպանութիւնների հետ աշխատելու, նրանց հետ որպէս թարգմանիչ եւ կարեւոր որոշումներ ընդունելու ընթացքում որպէս վկայ հանդէս գալու համար: Նրաներկայութեամբ են կնքուել զանազան առեւտրական եւ քաղաքական պայմանագրեր: Քաղաքական ասպարէզից անհետանալուց առաջ նա թողել է Պարսկաստանի մասին հակիրճ նօթագրութիւն, որը, պահպանուելով 24 այլ նօթագրութիւնների հետ՝ Ճապոնիայում, Ցէյլոնում, Օրմուզում, Տրիպոլիում, Գուջարատում եւ այլուր պորտուգալական առեւտրական ներկայութեան մասին, ի տարբերութիւն Պարսկաստանի մասին պատմող երկու այլ պորտուգալացի հեղինակների կողմից գրուած նօթերի, առաջին անգամ պորտուգալական պատմագրութեան մէջ հանգամանալից եւ ճշգրիտ տեղագրական նիւթ էր պարունակում ասիական այս երկրի մասին, որի բնակավայրերն ու նաւահանգիստները հետաքրքրում էին Պորտուգալիային:

Զիւլա Վեգելը (CNRS, Փարիզ) անդրադարձել է շիթ ժողովրդական մանրանկարչութեանը, որը ժամանակի ընթացքում փոփոխուել է՝ կախուած թէ ինչ նիւթի վրայ է արուած եւ որ գաւառում է ստեղծագործուած: Լինի դա ձեռագիր, որմնանկար, ապակու, կերպասի կամ այլ առարկաների վրայ արուած, այն միշտ զատորոշում է իր արտայայտութեան պարզութեամբ: Նկարների մեծ մասին, ինչպէս, օրինակ, Աբասի պատկերին, կարելի է հանդիպել տարբեր ժամանակաշրջաններում եւ տարբեր տեղերում, այդ թւում նաեւ՝ ոչ վաղ անցեալում, չնայած դրա արմատները բաւական հին ու աւանդական են:

Տոկիոյի Սուրբ Հոգու համալսարանից Ակիհիկոյ Եամագուչին գրել է Համադան գաւառի մրգագործութիւնը XVIII դարում յօդուածը՝ անդրադառնալով գաւառի աշխարհագրական եւ տնտեսական հնարաւորութիւններին, հարկային քաղաքականու-

թեանը, քաղաքների եւ գիւղերի (մեծ եւ փոքր) արտադրանքին: Յօդուածին կցուած են հետաքրքիր տեղեկատուական աղիւսակներ:

Էլիզաբեթ Թաջիրեան